ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1954 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՏԼԱՍԻ 2-ՐԴ* ՀԱՏՈՐԻ ՄԱՍԻՆ

Քարտեզագրական հրատարակությունների շարքում աշխարհագրական ատլասները, ի տարբերություն քարտեզների և գլոբուսների, ունեն իրենց ուրույն տեղը և ուսումնասիրության նպատակը, հանդիսանալով փոքրամասշտար դանազան քարտեզների ժողովածուներ։

Աշխարհագրական ընդհանուր կարգի ատլասներից տարբերվում են մասնագիտական ատլասները, որոնց թվին է պատկանում Ծովային ատլասը։

Ծովային ատլասի 1-ին հատորը, որը հրատարակվել է Հայրենական Մեծ պատերազմից հետո, սովետական հայտնի ծովակալ և պրոֆեսոր Ի. Ս. Իսակովի պատասխանատու խմբագրությամբ, 1951 թ. արժանացել է Ստալինյան առաջին կարգի մրցանակի։ Այդ հատորը պարունակում է բազմաթիվ քարտեզներ և նվիրված է օվկիանոսների ու ծովերի ընդհանուր նավիգացիոն-աշխարհագրական բնութագրմանը, աշխարհի գլխավոր նավահանգիստների քարտեզագրմանը։

Ծովային ատլասի 2-րդ հատորը, որի մասին գրված է այս գրախոսականը, լույս է տեսել 1953 թվականի վերջում, նույնպես ծովակալ, պրոֆեսոր Ի. Ս. Իսակովի պատասխանատու խմբագրությամբ և պարունակում է քարտեզներ՝ նվիրված համաշխարհային-(համատարած) օվկիանոսի ֆիզիկական աշխարհագրությանը։

Ծովային ատլասի 2-րդ հատորը բաղկացած է 76 երկէջանի մեծադիր քերթերից-պլանշետներից (քերթը 75×51 սմ), որոնք ստորաբաժանված են 4 գլխավոր բաժիններին։

1-ին բաժնի 6 քերթերը հատկացված են ծովային կարևորագույն նավագնացություններին և գիտարշավներին, օվկիանոսների ու ծովերի աշխարհագրական հայտնագործությունների և հետազոտությունների պատմությանը։

2-րդ բաժնի 34 քերթերը նվիրված են օկեանոգրաֆիային, օվկիանոսների կառուցվածքին, նրանց հիդրոլոգիական առանձնահատկություններին ու ռեժիմին, ծովերի բիոլոգիային։

3-րդ բաժնի 29 քերթերը պարունակում են կլիմայագիտական բովանդակության քարտեզներ. այդ բաժնում բնութագրված են համատարած (համաշխարհային) օվկիանոսի կլիմայական պայմանները, լուսաբանված են երկրագնդի կլիմայի հիմնական գծերը, սահմանված են երկրի կլիմայական մարգերն ու գոտիները (գոնաները)։

Ի վերջո, 4-րդ բաժնի 7 քերթերը պարունակում են երկրային մագնիսականության, քարտեզագրության և աստղագիտության վերաբերյալ ընդհանուր տվյալներ և տեղեկություններ։

Այսպիսով, Ծովային ատլասի 2-րդ հատորի թեմատիկան բազմակողմանի է, բովանդակության բնույթը՝ կոմպլեքսային, մի հանգամանք, որը պետք է համարել առաջին հաջողակ փորձերից մեկը։

Ծովային ատլասի 2-րդ հատորի սկզբում, առանձին քերթի վրա, տրված են ատլասի բոլոր քարտեզներին վերաբերող ընդհանուր պայմանական գունավոր նշանները (թվով՝ 24 և 29 բացատրություններ)։ Բացի այդ, յուրաքանչյուր քարտեզ ունի իր հատուկ պայմանական նշանները։

Նմանապես տրված են ատլասի քարտեզներում գործածվող 44 պայմանական կրճատումները. 2-րդ հատորին կցված է ատլասի անվանացանկը. նաև ընդհանուր նախաբանը։

Ծովային ատլասի 2-րդ հատորի 13 քերթերը, այն է՝ 11—14, 38—41, 43, 46, 47, 73, 76-ը իրենց տիտղոսային էջերում ունեն բացատրական համառոտ տեքստեր։

---

* Морской Атлас, том II, физико-географический. Ответственный редактор проф., адмирал в/о. И. С. ИСАКОВ, 1953.

Ջափոնյց արժեքավոր է, որ Ծովային ուլտասի 2-րդ հատորի քերթերի (պլանշետների) և քարտեզների մեկ քառորդը օրիգինալ են, ներկայացնում են նորույթ. դրանց մեջ չուշափված են նոր քեմաններ, կամ տրված են բովանդակության նոր լուսաբանություններ, կամ քի կատարված են նոր եղանակներով ու ձևերով։

Ուրույն քարտեզների դարձից հարկավոր է նշել՝

«Ռուսների հայտնագործությունները և ծովափերի առաջին ցուցակագրումը Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում», նման Խապատկանի ափերին (3-րդ քերթ). նաև այն քարտեզները, որոնց մեջ արտացոլված են օվկիանոսների ափերի տիպերը (տնտակները)՝ 13—14 քերթեր. առանձնապես ուշադրավ են 41-րդ քերթի 6 քարտեզները, որոնց բովանդակությունը վերաբերում է «Երկրի մակերևույթի ջերմային բալանսին»։

Գիտական հարցերի նոր լուսաբանում պարունակող քարտեզների շարքից հետաքրքրական են նրանք, որոնք վերաբերում են համատարած (համաշխարհային) օվկիանոսի հատակի ռելիեֆին (7—10 քերթերը), ինչպես նաև օվկիանոսների գրունտների բնութագրմանը (15-րդ քերթ)։

Այն քարտեզների խմբին, որոնք աչքի են ընկնում հետազոտող երևույթների արտացոլման առանձնահատուկ մեթոդներով, պետք է դասել մագնիսային քեմման ու խոնարհման քարտեզները, մագնիսային դաշտի լարվածության քարտեզները, որոնք նկատի են առնված 1950 թվականի համար (70 - 71 քերթեր)։

Ներածական բաժնում նշված է ռուս և սովետական ծովագնացների ու գիտնականների հոչակավոր դերը համաշխարհային օվկիանոսի հետազոտման գործում, ինչպես նաև մեր հայրենակիցների անվիճելի պրիորիտետը ծովերի, կղզիների, ծովափերի հայտնագործման և հետազոտման մեջ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում, Ախայի հյուսիս-արևելյան մասերում, Անտարկտիդա մայր ցամաքում, Անտարկտիկայի լայնատարած ծովերում, Խաղաղականի շատ կղզիներում և այլն։

Ընդհանրապես մեծ հետաքրքրությամբ կարդացվում և ուսումնասիրվում են մի շարք քարտեզներ, այդ թվում՝ օվկիանոսների հատակի և մայրցամաքների գեոմորֆոլոգիան, երկրաշարժեր և հրաբուխներ, մակընթացություններ և նրա առավել բարձրությունը, հոդմային ալեկոծությունները և ալիքացույցները. այն քարտեզները, որոնք վերաբերում են կլիմայական պրոցեսներին՝ տնդումների տարեկան տատանումներին, օդային գանգվածների սեզոնային վերաբաշխմանը, ամպամածության և մառախուղներին. շատ հարցեր լուսաբանված են ըստ սեզոնների, մի քանիսը նույնիսկ ըստ ամիսների. նմանապես ուշադրության արժանի են այն աղյուսակները (բանալիները), որոնք վերաբերում են արևածագին և արևամուտին (ըստ կոորդինատների), մթնաշաղի տևողությանը և շատ ուրիշներ։

Հաջող ընտրված, կազմված և դասավորված են շատ քերթերի և քարտեզների համակից փոքր և լրացուցիչ քարտեզները (врезки)։

Ծովային ուլտասի 2-րդ հատորի քի համաշխարհային և քի մասնավոր, նաև փոքր քարտեզների մասշտաբները ռացիոնալ են (հաջող և համապատասխան)։

Առանձին քերթի վրա տրված են քարտեզագրական հայտնի պրոեկցիաները, առավել համաշխարհային քարտեզների նկատմամբ։ Դրանց թվում՝ Մերկատորի, կավրայսկու, առավել ШИМИГА և Ք-ի և այլն։

Ծովային ատլասի 2-րդ հատորի քարտեզները գծված են առավել բնորոշ պրոեկցիաներով, նրա նկատի ունենանք ՍՍՌՄ ամբողջ բնաշրջակ տերիտորիայի ճիշտ արտացոլման և լավագույն ուսումնասիրության նպատակները, երբ մեր մեծ հայրենիքի տերիտորիան կենտրոնում է, իսկ նրանից դեպի արևելք և դեպի արևմուտք ձգվում են Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների լայնածավալ տարածությունները։

Ծովային ատլասի 2-րդ հատորի քարտեզները և՛ գիտական և՛ տեխնիկական տեսակետից գործում են ամենանպաստավոր տպավորություն։

Նրանք նպատակասլաց են, սիստեմատիկական տեսակետից հետևողական, բովանդակությամբ խոր և նշանակալից։

Քարտեզների կազմման սկզբունքները խիստ պահպանված են, մեծ ու փոքր քարտեզները ծանրաբեռնված չեն, դյուրընթեռնելի են։

Քարտեզների և նրանց նշանների գույները ու երանգավորումները իմաստալից են, նուրբ և դուրեկան։

Քարտեզների տեքստերի տերմինոլոգիան ճշտված է, աշխարհագրական անունների տառադարձությունը միակերպված։

Ծովային ատլասի ունի ոչ միայն հատուկ մասնագիտական ծովային նշանակություն, այլև նա խիստ օգտակար է ընդհանուր կրթական, ինչպես նաև տնտեսագիտական տեսակետից:

Ծովային ատլասը արժեքավոր, բազմազան և հետաքրքրական ձեռնարկ է հանդիսանում թե ծովային հիմնարկների գործիչների և թե դիտահետազոտական հիմնարկների, ինչպես նաև ՌՍԻՀ-երի աշխատողների համար:

Ծովային ատլասի բազմաթիվ և բազմատեսակ, բարդ և լուրջ քարտեզներ կազմելու վրա աշխատել է գիտա-կազմողական մեծ կոլեկտիվ, իսկ խմբագրական մարմինը բազկացած է աշխարհագրական, քարտեզագրական, ինժեներա-տեխնիկական գիտությունների ներկայացուցիչներից, ծովագնացներից և ծովային այլ գործիչներից, որոնց մեջ աչքի են ընկնում հայտնի անուններ՝ Շուլեյկին Վ. Վ., Դյոմին Լ. Ա., Բարսոնով Ա. Ն., Վիկե Վ. Յու., Գերասիմով Ի. Պ., Կրիկորի Ա. Ա., Նգորե Վ. Ե., Կավրայսկի Վ. Վ., Կալեսնիկ Մ. Վ., Պավլովսկի Ե. Ն., Պողոսյան Խ. Պ., Սալիշչև Կ. Ա., Շիրշով Պ. Պ., Շվեդե Ե. Ե. և ուրիշներ:

Ծովային ատլասի քարտեզներ կազմելու գործում մոտակա մասնակցություն են ցուցաբերել առաջին հերթին ՍՍՌՄ գիտական, ծովային, քարտեզագրական հիմնարկներ՝ Գեոդեզիայի և Քարտեզագրության Գլխավոր վարչությունը (ԳՍԳԿ), Գեոդեզիայի, Ավրոսյոմկայի և Քարտեզագրության կենտրոնական Գիտահետազոտական ինստիտուտը (ՑՆԻՈՒԳԱԻԿ), ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի մի շարք համապատասխան ինստիտուտներ, Գլխավոր Գեոֆիզիկական աստղագիտարանը, Համամիութենական Աշխարհագրական ընկերությունը, Մոսկվայի և Լենինգրադի Պետական համալսարանները և այլն:

Ծովային ատլասի 2-րդ հատորի հրատարակումը պետք է համարել նոր, մեծ նվաճում և աչքի ընկնող երևույթ սովետական քարտեզագրության պատմության մեջ:

Այդ չափազանց խոշոր և բարդ գործում, այնուամենայնիվ, մի քանի քարտեզներում ապրել են փոքր և մասնակի վրիպումներ: Դրանցից նշում ենք մի երկուսը:

ԳՐԱՖԻԿ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՆ

№ 5 քերթում՝ աշխարհի քարտեզ. սովետական ժամանակաշրջանի ծովային էքսպեդիցիաներ:

ԱՄՆ-ի գծային նշանի գույնը (ադյուտագույն) Ատլանտյան և Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսներում (օրինակ, Շպիցբերգենի կղզիների մոտ) ոչ ցերեկային լույսի տակ դժվարությամբ է տարբերվում սուսական ծովային «Մագնո» և «Կոնիպովիչ» էքսպեդիցիաների գույնից (վարդագույն): Կարելի էր ավելի տարբեր գույներ գործածել:

№ 11 քերթում՝ երկրաշարժեր և հրաբուխներ:

Գործող հրաբուխները նշված են կանաչ կետերով, իսկ երկրաշարժերի էպիկենտրոնները կարմիր. դևրագաուելի էր կատարել հակառակը:

№ 33 քերթում՝ մակընթացություններ:

Մակընթացությունների բարձրության բացակայության կոները կարելի էր չանցնել հեռու ցամաքի վրա, ինչպես այդ արված է Սպիտակ ծովի նեղուցում, Հնդկաստանի արևմտյան ափերի մոտ, Ֆրանսիայում՝ Բրետոն ծովափին, Ավստրալիայի հյուսիս-արևմտյան ափին, Հալիֆաքսից մոտիկ (Հս. Ամերիկայում) և այլն:

ԷԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՆ

№ 11 քերթում՝ երկրաշարժեր և հրաբուխներ:

Կովկասում երկրաշարժերի էպիկենտրոնները Գորի, Ախալքալաք պետք է նշված լինեն մասամբ ավելի արևելք, Շամախին ու Գորիսը՝ մասամբ դեպի հյուսիս-արևելք և այլն:

№ 12 քերթում՝ կիսանդների պեոմորֆոլոգիական քարտեզ:

Ալպիական ծալքավոր կառուցվածքների լեռների ու լեռնաշխարհների սիստեմում, առաջավոր Ասիայում հարկավոր էր ընդգրկել նաև դեպի հարավ՝ մինչև Հայկական Տավրոս ձգվող տերիտորիան, մեջն առնելով վանա լճի և Եփրատ գետի վերին երկու հոսանքների (Արածանի և Արմ. Եփրատ) ավազանը, այսինքն, ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

№ 41 քերթում՝ երկրի մակերևույթի ջերմային բալանսը:

Այդ քերթի վեց քարտեզից հինգում մոխրագույն շերիխներով ծածկված են կովկասը, Միջին Ասիան և այլն. քերթի տիտղոսային էջի բացատրական տեքստում ասված է,

որ դրա պատճառը չուսումնասիրված լինելն էր։ Մինչդեռ երկրային մակերևույթի ջերմային բալանսի հարցը մեզ համար հետաքրքրական է նաև, և առավել այդ տերիտորիաների վերաբերյալ։

Այնուհանդերձ այս փոքր դիտողությունները չնչին պետք է համարել Ծովային ատլասի 2-րդ հատորի հոյակապ հրատարակության նկատմամբ։

Մենք ջերմորեն ողջունում ենք Ծովային ատլասի 2-րդ հատորի լույս ընծայումը։

Հ. ՍՏԵՓԱՆՑԱՆ